ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/03

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ

Բողոքաբեր՝ «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝

«Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի և վերջինիս ներկայացուցիչ՝ Ա. Սարիբեկյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցում, դողորայքի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 22.01.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը համարել չկայացած կամ հնարավորություն տալ թիվ 1.1 հավելվածը շտկելու և գնման ընթացակարգը շարունակելու:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 22.01.2020թ.-ին:

22.01.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 31.01.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 31.01.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.02.2020թ.-ին:

2. <u>«Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Սույն թվականի հունվարի 15-ին ժամը 12:00-ին Արարատի մարզի Ազատավան գյուղի «Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված է եղել ԱՄԱՍ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով Ազատավանի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի դեղորաքի ձեռքբերման նպատակով գնանշման հարցում, որտեղ որպես մրցույթի մասնակից հանդես եմ եկել նաև ես Ա/Ձ Անահիտ Հակոբյանս: Գրանցամատյանում գնումների համակարգողի կողմից գրանցվելուց հետո մասնակցել եմ մրցույթին, ծրարը բացելուց հետո համակարգողը բացահայտել է որ ինձ մոտ պակասում է հավելված 1.1-ը, սակայն ինձ հնարավորություն չի տրվել տվյալ փաստաթուղթը նիստի հանձնաժողովի որոշմամբ 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկելու /Կառավարության որոշում 04.05.2017թ-ի 526-Ն որոշման 41-րդ կետի՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա

մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները/ և փոխարենը համակարգողի կողմից բառացիորեն ասվել է, որ ես համարվում եմ պարտված տվյալ մրցույթում 1.1 Հավելվածի բացակայության պատճառով: Տվյալ մրցույթում գնային առաջարկի համեմատում չի եղել 3 մասնակիցներից որևէ մի մասնակցի մոտ և միանգամից նախապատվություն է տրվել այն մասնակցին ում մոտ Հավելված 1.1-ը եղել է: Մրցույթը անցկացվել է բազմակի խախտումներով, որից հետո բացված փաթեթը գնումների համակարգողը վերադարձրել է ինձ

Տեղեկացնում եմ, որ նույն ծածկագրով ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1 մրցույթ է հրապարակել նաև ՀՀ արարատի մարզի Արևշատի ԱԱՊԿ ՊՈԱԿ-ը:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը համարել չկայացած կամ հնարավորություն տալ թիվ 1.1 հավելվածը շտկելու և գնման ընթացակարգը շարունակելու:

3. <u>«Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին՝ հնարավորություն տալով «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից 22.01.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Սահմանված ժամկետում չստանալով Պատվիրատուի կողմից գրավոր կարծիք, Բողոքներ քննող անձը 01.02.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ Արարատի մազպետ՝ Գ. Սարգսյանին և խնդրել է հանձնարարել «Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին հնարավորինս սեղմ ժամկետներում տրամադրել թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի անհրաժեշտ բոլոր փաստաթղերը:

Պատվիրատուն 03.02.2020թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

««2020 թվականի հունվարի 15-ին ժամը 12-ին ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով կայանելիք մրցույթի ընթացքում տեղի է ունեցել մասնակից՝ Ա/Ձ Անահիտ Հակոբյանի կողմից ոչ պատշաճ պահվածք;

Երբ հայտարարվել է, որ մասնակցի կողմից բացակայել է 1.1 հավելվածը և հրավերը չի համապատասխանում հրավերով հայտարարված պահանջներին, տեղի ունեցավ իրարանցում և խառնաշփոթ:

Մասնակիցը առանց մեր թույլտվության սեղանից վերձնում է իր կողմից ներկայացված ամբողջական փաթեթը և հեռանում է: Մեր բազմաթիվ հորդորների չի վերադարձվում այն և կասեցվում է գործընթացը և չի կայանում գնային առաջարկների համեմատումը:

Գնահատող հանձնաժողովի 2020թ.-ի հունվարի 17-ի թիվ 2 որոշմամբ հայտարարվում է չկայացած ընթացակարգի վերաբերյալ հայտարարություն և այն 23.01.2020թ.-ին հրապարակվում է կայքում:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դողորայքի ձեռքբերման նպատակով 08.01.2020թ.-ին հայտարարվել է թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.01.2020թ.-ի թիվ 1 արձանագրության համաձայն՝ գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել երեք մասնակից՝ այդ թվում նաև «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ն:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի հայտում բացակայել է հրավերով պահանջվող թիվ 1.1 հավելվածը, ինչով պայմանավորված Հանձնաժողովի կողմից հայտարարություն է արվել մերժելու Ընկերության հայտը:

Հանձնաժողովի 17.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի անցկացման պայմանները չի համապատասխանել և չի բխել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, ուստի առաջարկվել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

23.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից 22.01.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն հրավերի 2-րդ մասի գնանշման հայտը պատրաստելու մասին հրահանգի 2-րդ կետի 2.2-րդ ենթակետի համաձայն՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված թիվ 1.1:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Ազատավանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կողմից դողորայքի ձեռքբերման նպատակով 08.01.2020թ.-ին հայտարարված թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ գնահատող հանձնաժողովի 16.01.2020թ.-ի թիվ 1 արձանագրության համաձայն՝ գնանշման հարցման ընթացակարգին հայտ ներկայացրած «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի հայտում բացակայել է հրավերով պահանջվող թիվ 1.1 հավելվածը, ինչով պայմանավորված Հանձնաժողովի կողմից հայտարարություն է արվել մերժելու Ընկերության հայտը:

Հանձնաժողովի 17.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի անցկացման պայմանները չեն համապատասխանում և չեն բխել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից, ուստի առաջարկվել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, ինչ մասին 23.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին դիմում-հայտարարությունը՝ թիվ 1 հավելված, իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ թիվ 1.1 հավելված, գնային առաջարկը՝ թիվ 2 հավելված, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ առաջարկող ապրանքի ամբողջական նկարագրի՝ թիվ 1.1 հավելվածի բացակայությունն արձանագրվելու դեպքում կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, ուստի Բողոքներ քննող անձը փաստում է, որ այս մասով «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած համարելու պահանջին, ապա այս մասով Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի 17.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, ինչ մասին 23.01.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Այս պարագայում Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընկերության կողմից բողոքով ներկայացված երկրորդ պահանջը եղել է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը, ինչը ըստ էության հանձնաժողովի կողմից կատարվել է:

Ուստի տվյալ պարագայում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջի մասով պետք է թողնել առանց քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից 22.01.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/03 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

1. Պարտավորեցնել թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել.

- 17.01.2020թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը,
- 16.01.2020թ.-ի թիվ 1 արձանագրությամբ կայացված «Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել թիվ «ԱՄԱԱ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու « Անահիտ Հակոբյան» Ա/Ձ-ի հայտով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու մասին որոշում:

3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջի մասով բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ